ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/147

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.04.2022թ. թիվ 26/26-1/7512-2022 գրությամբ «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 21.04.2022թ. թիվ 02/16.4/3888-2022 գրության հիման վրա, 28.04.2022թ. թիվ 26/26-1/7512-2022 գրությամբ նախաձեռնել է «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սուրո Օսկանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Սուրո Օսկանի» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեն դիմելով ՀՀ ֆինանսների նախարարություն հայտնել է, որ Կարգի 41-րդ կետի համաձայն «Սուրո Օսկանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից ընդհանրապես չի կատարվել:

Հարգելի՝ Բողոքներ քննող անձ, շտկումը չկատարելու պատճառը եղել է այն, որ ես «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ի տնօրեն և միակ աշխատակից Արփինե Կարապետյանս այդ ժամանակ վատառողջ եմ եղել, ինձ մոտ ախտորոշվել է սուր շնչառական հիվանդություն՝ սուր բրոնխիտ, որը զուգորդվել է բարձր ջերմությամբ: Նշեմ որ այդ հիվանդության ժամանակ ունեցածս սիպտոմները խիստ նման էին COVID-19 սիպտոմներին՝ ցավ կոկորդում և կրծքավանդակում, հազ, բարձր ջերմություն, թուլություն: Ելնելով այդ սիպտոմներից ես հնարավորինս ինքնամեկուսացվել էի, քանի որ մտավախություն ունեի, որ հիվանդացել եմ COVID-19 և այլ մարդկանց հետ շփվելու դեպքում կարող եմ վարաքել նաև նրանց: Այս հանգամանքների բերումով է, որ չեմ կարողացել Պատվիրատուի պահանջած ժամկետում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել հայտի շտկումը: Հետևաբար հայտնում եմ, որ ես չեմ ցանկացել խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն, սակայն հանգամանքների բերումով անկախ իմ կամքից չեմ կարողացել դրանք կատարել: Ելնելով նշվածից խնդրում եմ հնարավորության դեպքում ինձ չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Սուրո Օսկանի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/147 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.04.2022թ. թիվ 02/16.4/3888-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2022 թվականի մարտի 17-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/9 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի կառուցապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել <<Սուրո Օսկանի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն <<Սուրո Օսկանի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից ընդհանրապես չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ վերը նշված ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/147 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/147 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/147 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի կառուցապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է

«ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/9» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2022թ. նիստի թիվ 2-5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից armeps.am համակարգով չի ներկայացվել բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 14.04.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 13.04.2022թ. armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 2-6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանութոյունները չեն շտկվել:

6. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետի համաձայն որոշել է Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

7. ՍՑ-ՆԳ-2022/147 ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից տրված քաղվածք, համաձայն որի՝ Ընկերության տնօրեն Արփինե Սամվելի Կարապետյանի մոտ ախտորոշվել է սուր բրոնխիտ և 12.04.2022-15.04.2022թթ. ընկած ժամանակահատվածում ամբուլատոր պայմաններում նշանակվել է բուժում:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.04.2022թ. թիվ 26/26-1/7512-2022

գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 21.04.2022թ. թիվ 02/16.4/3888-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի

ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի կառուցապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/9» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2022թ. նիստի թիվ 2-5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից armeps.am համակարգով չի ներկայացվել բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը, ինչից ելնելով որոշում է կայացվել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 14.04.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Արձանագրված անհամապատասխանությունների մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 13.04.2022թ. armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 2-6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանութոյունները չեն շտկվել, ինչից ելնելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետի համաձայն որոշել է Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՍՑ-ՆԳ-2022/147 ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից տրված քաղվածքը, համաձայն որի՝ Ընկերության տնօրեն Արփինե Սամվելի Կարապետյանի մոտ ախտորոշվել է սուր բրոնխիտ և 12.04.2022-15.04.2022թթ. ընկած ժամանակահատվածում ամբուլատոր պայմաններում նշանակվել է բուժում:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն 13.04.2022թ. ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը մինչև 14.04.2022թ. ներառյալ շտկելու վերաբերյալ, սակայն արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ նշված ժամանակահատվածում

Ընկերության տնօրեն (Ընկերության միակ աշխատող) Արփինե Կարապետյանի մոտ ախտորոշվել է հիվանդություն, ինչը և պատճառ է հանդիսացել արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության վերը շարադրված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, քանի որ «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ն նման պայմաններում օբյեկտիվորեն իր կամքից անկախ պատճառներով զրկված է եղել սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.04.2022թ. թիվ 26/26-1/7512-2022 գրությամբ «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**